Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 83 - Ա
որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՇՈՒՐՋ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Գնահատել Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների մասնագիտական զարգացման ոլորտում իրականացվող բարեփոխումների քաղաքականությունը և այդ գնահատման հիման վրա մշակել ու ներկայացնել բարեփոխումների արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանն ու Ազգային ժողովի Գիտության, կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սփյուռքի մշտական հանձնաժողովին:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ
4.	Ծրագրի կատարողը	«405 կրթական դաշինք» զարգացման հիմնադրամ (Երևան, Հալաբյան 16 փողոց, ՀՎՀՀ՝ 01351937)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, բնագավառը՝ հանրակրթություն
6.	Ծրագրի բյուջեն	14,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի մարտի 6-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Կրթական հետազոտություն, տվյալների հավաքագրում ու զեկույցի ներկայացում, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի մարտի 6-ից մինչև նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 14,000,000 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Կրթական հետազոտության, տվյալների հավաքագրման ու զեկույցի ներկայացման ծառայությունների ձեռքբերում՝ 14,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	1) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն. 2) Ազգային ժողովի Գիտության, կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սփյուռքի մշտական հանձնաժողով. 3) Կրթության զարգացման ու նորարարության ազգային կենտրոն. 4) Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն. 5) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն. 6) Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներ. 7) Հետազոտական կազմակերպություններ. 8) Պետական և հասարակական ոլորտների կրթական կառույցներ և ներկայացուցիչներ: Տվյալ կառույցների ու անհատների հետ փոխգործակցությունը նպատակ ունի խթանել կրթական քաղաքականության տվյալահեն մշակումը, ոլորտում հիմնավորված լուծումների առաջարկը և համակարգային բարեփոխումների գործընթացին գիտական ու մասնակցային աջակցությունը:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված Բարեգործական ծրագրերը բարեգործական

		որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

25.02.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ